

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Թարգմանված լուրջյուն Սկիզբը՝ 1988-ին

Սլավիկ (Վյաչեսլավ) Հայրառեցյանը 1988-ին Արցախ մեկնած առաջին ծիծեռնակներից էր, ՀՅԴ անդամ: 1976-77թթ. Հայաստանի լեռնազնացության շեմպիոն է եղել: Չոհվել է 1992թ. հունվարի 21-ին Շուշիի ժքանութ հետախուզական գործողությունների ժամանակ:

Խոսքս, որ չգիտեմ, թե որ ժանրին կողատկանի, թող լինի մեկը այն դարգելներից, որոնք մինչեւ օրս քեզ չեն հասել, կամ քեզ չտրվեցին: Արձանի էիր (էիր) ամենաբարձրին, համամարդկային դարգելին, որը տրվեց միայն առաջալներին՝ Փրկչի կողմից:

Դու (մենք) Արցախի ազատության, ասել է՝ հայի ազատության քարոզիչ-առաջալներից մեկն ես: Քանզի ազատության մեր քարոզն է քրիստոնեության նման գաղտնի էր: Գաղտնի, ու «հրաշքների կատարում» էինք ուզում տարածել: Ասել եմ առացուցել, թե Արցախն է Հայ Դաշի մի գրասենյակ է: Այստեղ հրաշքներ գործվել էին մեզնից առաջ: Դրանք մեր խաչքարերն ու վանքերն են: Դրանք գրաբարից մնացած բառերն են արցախյան բարբառում: Դա հայոց արիական ցեղի ոգին է՝ արցախահայության մեջ անցինց մնացած: Ու դրա հաճար էլ նրանք «հայի ուրիշ տեսակն են»:

Նորից բառերիս հետեւից ընկած գնացի: Դիմա ինձ հաճար Արցախը դու ես՝ մեկն ամփոփված մյուսի մեջ: Դրա հաճար է հիմա ավելի շատ եմ սիրում քեզ՝ ասել է թե՝ Արցախը, «իմ ցավ, իմ ծիծաղ Արցախը»:

Դիմա, խախտելով մեր դայմանը, գրավոր բացում եմ գաղտնիքը: Եթե ժամանակին դարտադրված ուզում էինք առացուցել, եւ ի՞նչն առացուցել, որ խաչը խլամի խորհրդանիշը չէ, հիմա կարծես կամաց-կամաց հավատում են, որ այդուս է, անզամ՝ անհավատները: Բա ինչո՞ւ կարող է Արցախի հողը հայինն ու հայկական շիներ: Դու, մենք հավատի դակաս շունենք: Մեզ առացուցներ էլ դեմք չեն: Եվ այն, ինչ ի վերուս է տրված մեզ, մերև է անսակարկ: Դիսուսի փոխարեն խաչին ունենք հայոց Վրեմը, եւ հիշողություն-հավատը դեռ հաշմված չէ, դրա հաճար էլ գնացինք, քանզի Վրեմը հարություն է առել: Գնացինք, որ հավատ դարձած գաղափար-հիշողությունը տարածենք, մոռացումից փրկենք, որով

հետեւ արեւելյան կարմիրին ուսերին առած՝ հնսերնացիոնալը ներսում իր սեւ գործն էր անում: Գնացիր ու ... գնացիք: Դիմա ես գինվոր Սլավիկի մասին չեմ գրում, քանզի դրա համար վերադարձ է դեմք դեղի մեր զարհութելի, գաղտնի շրջանը, մինչեւ 92 թվականի հունվարը: Եվ այդ 4 տարում, երբ 40 ու 400 տարվա գործ արվեց, երբ դեռ թշնամիդ ու բարձրակամդ շին ջոկվում, դու շատ բան արեցիր: Նետախուզական ջոկատի հրամանատարը եւ հետախուզ էր, եւ զինվոր, եւ դարտիզան: Վախենում էինք զինվորական հագուստները ցերեկով լվանալ, գիշերվա զինվորներ էինք, որ արեւածին առավուսներ ու ազատություն դիմի բերեինք:

Դիմա ես ինչ անում եմ, Սավ, երկուսիս փոխարեն եմ անում: Երկուսիս արածի հաճար մենակ դատախան սվեցի բոլորին՝ ի՞նչ ցավ ու նախատինք դիմագրավելով, քանի որ մեր սիրելը մեղք էին հաճարում: Աներեւույթ, կովիսների ետեւում մնացի, սեւ ներս արած, կարմիրը՝ դուրս: Արցունքներս կով տալով՝ բոլոր հարսանիքների հարսի ներմակ շորը հազար (մեր հարսանիքը Նախիջենանում էինք անելու՝ Նոյի նաշասեղանի տեղում): Բոլոր զոհերի հետ քեզ հողին հանձնեցի, բոլոր հերոսների (իսկական) շքանշանները քո կրծքին դրեցի: Աղրեցինք այդուս: Աղրեցինք՝ երեկոյան ընտանիքի հորը սղասող տան նման: Դու մեզ հետ ես: Վաղը քո ծննդյան օրն է, եւ աղջիկդ կիանզցնի մոմերը, այսինքն՝ դու կիանզցնես: Եվ Լենա տաշիկը նորից սրաբաց կիյուրասիրի բոլորին, թե՝ տղայիս ծնունդն է:

Ասեմ, որ վաղը նաեւ Սուրբ Շուշանիկի օրն է: Վաղը իմ անզան ու ծննդյան օրն է: Թեզ որդիս նվեր մնաց իմ խենթ ջահելությունը, ինձ քեզ անշափ նման մեր աղջիկը եւ երկուսիս ծերությունը:

Շարունակելի, շարունակելի, շարունակելի...

Լոռիքունը թարգմանեց
Շուշանիկ Աբրամսաւ-
Ռազրստեցաւ

